

---

# Մամլո հաղորդագրություն

---

ՀԲԸՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

21 սեպտեմբեր 2021թ.

## Ենթակա է անհապաղ հրապարակման

Երեսուն տարի առաջ՝ սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը կողմ քվեարկեց անկախ և ինքնիշխան պետության ստեղծմանը: Դարեր շարունակ պատմական Հայաստանը ապրել է առանց անկախ պետականության՝ իրար հաջորդող կայսրությունների կազմում, իսկ կարճատև կյանք ունեցած Առաջին հանրապետությունը վերջնարդյունքում նույնպես դարձավ Խորհրդային մեծ պետության մասը:

1990-ական թվականներին ապրող մարդական համար անկախ պետություն ունենալը նման էր երազի, որը մեկ գիշերում իրականություն դարձավ՝ սփոփելով նաև Հայոց Ցեղասպանությունը վերապրածների և նրանց սերունդների հոգիները, ովքեր հնարավորություն ունեցան տեսնելու, թե ինչպես է հայոց եռագույնը վեր բարձրանում Միավորված ազգերի կազմակերպությունում: Նմանապես, Երևանում անկախ Հայաստանի քաղաքացիների կողմից Լենինի արձանի տապալումը և դրան զուհագեռ հայկական խորհրդարանի առաջին նստաշրջանի բացումը խորհրդանշական էին հավաքական հոգեբանության փոփոխության առումով:

Այսուհետ, հայկական ազգային ինքնությունը այլևս միայն անցյալի ողբերգությունների կրողը չէր, այլև նոր բացված անսահման հնարավորությունների, որոնք հայ ազգին դարձնելու էին արդի համաշխարհային ընտանիքի մի մասը: Ազատ հայրենիքը դարձավ աշխարհի տարբեր անկյուններում ապրող հայերի ուշադրության առարկան: Հայկական սփյուռքը, ով համարում էր անկախ հայրենիքը սեփական ժառանգության և ինքնության պահպանման երաշխավորը, ակտիվորեն սատար կանգնեց անկախության մարտահրավերների և հնարավորությունների բովոլ անցնող Հայաստանին՝ մասնակցելով պետականաստեղծման գործընթացին:

Մակայն, շուտով այս ոգևորությունը փոխարինվեց դառը իրականությամբ, երբ Հայաստանը ենթարկվեց պատերազմի և տնտեսական մարտահրավերների պատճառով ստեղծված դժվարություններին և անհաջողություններին: Միայն Արցախյան առաջին պատերազմի ավարտից հետո Հայաստանը սկսեց թևակոխել վերակառուցման և ստեղծարար աշխատանքի նոր դարաշրջան:

Որպես զարգացող պետություն՝ Հայաստանը հաջորդող տարիներին հնարավորություն ունեցավ ցույց տալ աշխարհին իր յուրօրինակ արժեքը: Մինչ 2000-ականների կեսը զբոսաշրջությունը,

գյուղատնտեսությունը և նորարարական տեխնոլոգիաները եկան փոխարինելու շարքից դուրս եկած խորհրդային արդյունաբերության վրա հիմնված տնտեսությանը:

1990-ականների սկզբի Երևանի փոշոտ փողոցները, քանդված շենքերը և ճանապարհները փոխարինվեցին ժամանակակից մայրուղիներով, առաջատար սարքավորումներով և համակարգերով զինված ենթակառուցվածքներով, ապահով ու կոկիկ դպրոցներով և համերգասրահներով, գերժամանակակից օդանավակայանով, բազմազան խոհանոցներ ունեցող ռեստորաններով և շքեղ միջազգային հյուրանոցներով, բազում առևտրի կենտրոններով, դեսպանատներով և այլն: 1988թ. ավերիչ երկրաշարժի արդյունքում գետնին հավասարեցված Գյումրին այսօր դարձել է բարձր տեխնոլոգիական հանգույց ստարտափների համար՝ նոր կյանք հաղորդելով երիտասարդներին և զբոսաշրջիկներին հրապուրող ստեղծարար մշակույթին:

Հեռավոր բնակավայրերը, որտեղ գործազրկությունը երկար տարիներ հետևողականորեն քայքայում էր ընտանեկան և համայնքային համախընքվածությունը, վերջին տասնամյակում ականատես են եղել կին գործարարների նշանակալի ակտիվությանը, որոնց կարևոր աջակցություն է տրամադրվել իրենց նախաձեռնությունները կյանքի կոչելու համար: Բացի այդ, այսօր տարբեր համայնքներում գործում են տեխնոլոգիական կենտրոններ, որտեղ պատանիները դասերից հետո ծանոթանում են նորարարական տեխնոլոգիաներին՝ միջազգային հարթակներում մրցակցային դառնալու նպատակով: ՀԲԸՄ-ն իր գործընկերների հետ միասին աջակցում է այսօրինակ նախաձեռնություններին՝ ձգտելով հավասար հնարավորություններ ստեղծել հայ կանանց և երիտասարդների համար:

Բարձրագույն կրթության ոլորտում գործող Հայաստանի ամերիկյան համալսարանը, որի համահիմնադիրն ու կարևոր աջակիցն է նաև ՀԲԸՄ-ն, այս ընթացքում կարողացել է փոխել բազմաթիվ հայ երիտասարդների աշխարհայացքը:

Հայաստանի առողջապահության համակարգը նույնպես, ՀԲԸՄ-ի և հայերի կողմից հիմնադրված առաջատար առողջապահական կազմակերպությունների օգնությամբ, հետևողականորեն առաջընթաց է ունեցել: Համավարակի և պատերազմի ժամանակ արևմուտքում վերապատրաստված տեղացի բժիշկները և մասնագետները, իրենց օտարերկրյա գործընկերների հետ ուս ուսի տված, իրականացրել են կյանքեր փրկած բարդ վիրահատություններ և ախտորոշման լավագույն սարքավորումների միջոցով բուժել զինձառայողների և քաղաքացիական մարդկանց:

Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Լատինական Ամերիկայի հայազգի գործարար հսկաները և բարեգործները հայ ժողովրդի նշանավոր գավակներն են, որոնք պատմության մեջ կմնան որպես առաջին ռահվիրաներ և մեծ երազողներ: Զուգահեռ, այսօրվա հայ երիտասարդները շարունակաբար այցելում են իրենց հայրենիք՝ կապվելու իրենց ազգային արմատներին և մասնակցելու հայրենիքի շենսցման ծրագրերին՝ ամուր կապեր հաստատելով իրենց տեղացի հասակակիցների հետ: Բացի այդ, ՀԲԸՄ կրթաթոշակները հնարավորություն են տվել մի շարք հայաստանցի ուսանողներին ի կատար ածել իրենց երազանքները և սովորել աշխարհի լավագույն համալսարաններում՝ դառնալով մրցակցային, փորձառու և պրոֆեսիոնալ հայեր՝ պատրաստ ծառայելու իրենց հայրենիքին:

2018թ. -ի իշխանափոխությունից հետո Հայաստանում հաջորդաբար անցկացվեցին միջազգային կառույցների կողմից ազատ և արդար ճանաչված ընտրություններ: Ավելին, ընտրողների նախընտրությունները շարունակում են հիմնված լինել ժողովրդավարական արժեքների վրա՝ միևնույն ժամանակ հավատարիմ մնալով գործընկերների հետ ռազմավարական կարևորություն ունեցող հարաբերությունների պահպանմանը:

Այս տարի անկախության տարեդարձը խորհելու առիթ է տալիս, թե արդյոք Արցախյան երկրորդ պատերազմից հետո ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրողություններից և ներքաղաքական սուր պայքարից թուլացած անկախ հայկական պետությունը կարող է ուղղել իր մեջքը և հաղթահարել այս ամենը:

ՀԲԸՄ-ն, որպես Սփյուռքի ամենահին կառույցներից մեկը, ով ազգային ճգնաժամերի ժամանակ մշտապես կանգնած է եղել առաջնագծում, այսօրվա մարտահրավերներին մոտենում է երկարաժամկետ հեռանկարի տեսանկյունից: Մեր ձգտումը՝ ժողովրդին վեր դասել քաղաքական գործընթացներից, օրհասական իրավիճակներում հայ ժողովրդի դիմացկունության մասին անթիվ պատմությունների ստեղծման պատճառ է դարձել: Մերտ շփումները աշխարհի տարբեր անկյուններում, գյուղերում և քաղաքներում ապրող հայ մարդկանց ու ընտանիքների հետ, ինչպես նաև հայ ժողովրդի պատմության շրջադարձային պահերը վեր են հանել վճռականության և հույսի մի ընդհանուր գիծ, որը կապում է բոլորիս՝ որպես մեկ միասնական հայ ազգի:

Մենք հավատում ենք ազատ Հայաստանին, քանզի նրա մեջ է ամփոփված հայկական ոգու էությունը, որը առկա է աշխարհում ապրող ամեն հայի մեջ:

Եվ երբ ոչինչ չի խանգարում հային լինել հայ, ապա մեր ձեռքբերումները ցանկացած ոլորտում կարող են սահմաններ չճանաչել: Չնայած անկախության առաջին տարիների դժվարություններին, մենք հավատարիմ եղանք մեր ուղուն և հետևապես իրավունք չունենք այսօր մեջքով շրջվել դեպի այն ամենը, ինչը կատարվել է նախորդ երեսուն տարիներին:

Երեսուն տարին պետության համար բավական քիչ ժամանակ է, սակայն Հայաստանը պետք է արդեն թերթի «նորաթուխ ժողովրդավարության» էջը: Թեև ոչ իր լավագույն ձևով, սակայն, Հայաստանը նախքան պատերազմը հաստատակամ էր նոր թափ հավաքել և առաջընթաց ապահովել մի շարք կարևոր հարցերում: Մենք անկեղծորեն հուսով ենք, որ այս նշանակալի տարեդարձը կհիշեցնի աշխարհի բոլոր հայերին, որ երեսուն տարի անց մենք չենք կարող և չենք պատրաստվում հետ ընկրկել կամ կորցնել մեր վստահությունը մեր ուժերի նկատմամբ:

Մենք «ի հեճուկս ամեն ինչի» ժողովուրդ ենք, և աշխարհը պետք է ընդունի մեր այս ինքնատիպ հատկանիշը, որպեսզի այլևս չանտեսի հայ ժողովրդի վախճանի մասին հնամաշ կանխատեսումները: Ժամանակն է՝ աշխարհը հավատա Հայաստանին: Ժամանակն է, որ մենք՝ հայերս հավատանք մեր ուժերին:

Միությունը գորություն է:

*Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) սփյուռքի հնագույն, համաժողովրդական և համահայկական կազմակերպությունն է: Հիմնված լինելով 1906 թվականին՝ ՀԲԸՄ-ի*

գլխամասային գրասենյակը գտնվում է Նյու Յորքում: ՀԲԸՄ-ը կրթական, մշակութային և մարդասիրական ծրագրերի միջոցով պահպանում և զարգացնում է հայկական ինքնությունն ու ժառանգությունը՝ յուրաքանչյուր տարի ազդեցություն ունենալով աշխարհով մեկ սփռված շուրջ 500,000 հայերի կյանքի վրա:

ՀԲԸՄ-ի և իր աշխարհասփյուռ ծրագրերի մասին հավելյալ տեղեկություն ստանալու համար կարող եք այցելել [www.agbu.org](http://www.agbu.org):

---

## Լրատվական հարցումների համար դիմել՝

ՀԲԸՄ մամուլի գրասենյակ  
55 East 59-րդ փողոց  
Նյու Յորք, NY 10022-1112  
Հեռախոս՝ 212.319.6383  
Էլ. փոստ՝ [communications@agbu.org](mailto:communications@agbu.org)